ԿԱՐԾԻՔ

ՆԱՐԵԿ ԳԱՐԻԿԻ ՇԱՐԱՖՅԱՆԻ «ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ՈՃՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 1988-1990ԹԹ.» Է. 00.01 - «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՊԱՏՄԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ:

Ղարաբաղյան երրորդ պատերազմում ՀՀ և ԱՀ կրած ծանր կորուստների և դրանից հետո հայկական երկու հանրապետությունների նկատմամբ տարածքային պահանջների ու հայ ժողովրդի ստեղծած նյութական և հոգևոր արժեքների բացահայտ յուրացման պայմաններում հրատապ անհրաժեշտություն է դարձել խորությամբ ուսումնասիրել և հստակ պատկերացում կազմել Ադրբեջանի ցեղասպան քաղաքականության և ընդհանրապես հայակործան ծրագրերի վերաբերյալ:

Այդ քաղաքականությունը առավել բացահայտ բնույթ էր ստացել դեռևս արցախյան ազատագրական պայքարի սկզբնափուլում, երբ Հայոց Արևելից նահանգների հայության քաղաքական, իրավական պահանջները մեկընդմիշտ վերացնելու նպատակով խորհրդային Ադրբեջանի ղեկավարությունը, ԽՍՀՄ կենտրոնական իշխանությունների թողտվության պայմաններում, Ադրբեջանի հայաշատ վայրերում և ԽՍՀՄ վարչական միավորներից մեկը հանդիսացող ԼՂԻՄ-ի նկատմամբ ցեղասպանական գործողություններ իրականացրեց:

1988թ. փետրվարի 27-29-ն ընկած ժամանակահատվածում Սումգայիթում, 1988թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին Կիրովաբադում (Գանձակ) ու այլ բնակավայրերում և 1990թ. հունվարի 13-19-ին Ադրբեջանի մայրաքաղաք Բաքվում հայերի նկատմամբ ջարդերն ու այլ հանցագործությունները ցեղասպանական գործողություններ էին:

Նարեկ Շարաֆյանի կողմից քննության ներկայացված սույն ատենախոսությունը նվիրված է այդ կարևոր հիմնախնդրի հետազոտությանը: Վերոհիշյալ ուսումնասիրությամբ փորձ է կատարված փաստարկված և ապացուցողական հենքի վրա ներկայացնել նշված իրադարձությունները, դրանցում առկա օրինաչափություններն ու կազմակերծված լինելու հանգամանքը և դրանց հետևանքները:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից, եզրակացություններից և օգտագործված գրականության ցանկից (ընդամենը՝ համակարգչային շարվածքի 167 էջ):

Աշխատության յուրաքանչյուր գլխում շարադրված են խնդրո առարկա հարցերի հետ առնչվող հիմնական նյութն ու հեղինակի եզրակացությունները:

Ներածությունում հիմնավորված են ուսումնասիրվող թեմայի արդիականությունը, գիտական նորույթն ու գործնական նշանակությունը, հետազոտության նպատակներն ու խնդիրները, ցույց է տրված հիմնախնդրի գիտական մշակվածության աստիճանը, ներկայացված է գրականության և աղբյուրների տեսությունը:

Ատենախոսության առաջին գլուխը, որ վերնագրված է «Հայերի զանգվածային ջարդերի խորհրդային Ադրբեջանի քաղաքականության նախահիմքերը», կազմված է երեք ենթագլուխներից:

Ատենախոսը համապատասխան փաստերի հիման վրա ներկայացրել է տվյալ տարածքում հայերի և կովկասյան թաթարների միջև տեղի ունեցած ազգամիջյան բախումները մինչև Ադրբեջանի հանրապետության կազմավորումը 1918թ.: Դա հիմնականում պայմանավորված էր Թուրքիայի կողմից կովկասյան թաթարների շրջանում համաթյուրքականության գաղափարների տարածման և հայ ժողովրդի համար անտանելի պայմանների ստեղծման անհրաժեշտությամբ՝ վերջնական նպատակ ունենալով տիրանալու հայկական տարածքներին, մասնավորապես Հայոց Արևելից նահանգներին:

Ն. Շարաֆյանը իրավացիորեն նկատել է, որ Հայաստանի և Ադրբեջանի խորհրդայնացումը չհանգեցրեց հակամարտության կարգավորմանը, որովհետև խորհրդային Ադրբեջանի ղեկավարությանը այս անգամ փորձում էր հասնել իր նպատակին հայերի տնտեսական մեկուսացման, հայկական հոգևոր և նյութական մշակույթի ոչնչացման միջոցով: Ակնհայտ էին նաև հայերի նկատմամբ քաղաքական հետապնդումները:

Աշխատանքի երկրորդ վերնագրված «Սումգայիթի հայ բնակչության նկատմամբ իրականացված ջարդերն ու այլ հանցագործությունները» գլխում, որը բաղկացած է երեք ենթագլուխներից, ներկայացված են Սումգայիթում հայերի նկատմամբ իրականացված ջարդերի նախապատրաստական փուլը, սկիզբը,

ընթացքը, դրանց հետևանքները և դատապարտվածության աստիճանը: Փաստացի նյութերով ատենախոսը ապացուցում է, որ Սումգայիթի հայերի ջարդերն իրագործվել են ազգային ատելության շարժառիթով: Չնայած ԽՍՀՄ օրվա քաղաքական ղեկավարությունը ամեն կերպ փորձել է կոծկել, թաքցնել իրականությունը, պարտակել հանցագործությունը, այնուամենայնիվ քրեական գործերով վարույթ իրականացրած մարմինների պատրաստած նյութերում և դատավարական փաստաթղթերում տեսանելի են ջարդարարների գործողություններն ու նպատակները:

Ատենախոսը բավականինն հանգամանալից քննարկել է սումգայիթյան ջարդերի պատմահրավական ուղղույթները, փորձելով ջարդերին նախորդած դեպքերի և բուն գործընթացի միջև տեսնել տրամաբանական կապ, որը ամբողջապես տեղավորվում է ցեղասպանությունը բնութագրող գործողություններում:

Երրորդ գլուխը վերնագրված է «Կիրովաբադի (Գանձակ) և Բաքվի հայ բնակչության նկատմամբ իրականացված ջարդերն ու այլ հանցագործությունները», որի երեք ենթագլուխներում Ն. Շարաֆյանը քննության նյութ է դարձրել Գանձակում և Բաքվում 1988-1990 թվականներին հայ բնակչության ջարդերի նախապատրաստման ու իրականացման գործընթացը, ներկայացրել դրանց հետևանքները և դատապարտվածության աստիճանը:

Ատենախոսը ճիշտ է նկատել, որ քաղաքում հայերի առավել զանգվածային սպանություններ չեն իրագործվել հայկական թաղամասի առկայության, ինքնապաշտպանության կազմակերպման, ԽՍՀՄ-ում զինված ուժերի ստորաբաժանումների կողմից առավել թիրախային գործողությունների պատճառով:

Գանձակի ջարդերը առիթ դարձան, որ հայաթափվեն նաև հարակից բնակավայրերը: Կարծում եմ, որ այստեղ ատենախոսը պետք է նկատեր և շեշտեր, որ հայ մարդիկ ոչ միայն զրկվեցին իրենց բնակարաններից և ունեցվածքից, այլ նաև պատմական հայրենիքից, մասնավորապես, խոսքը վերաբերում է Ուտիքի վերջին հայկական բնակավայրերին ու հյուսիսային Արցախի հայահոծ տարածքներին:

Հեղինակը փաստերով հիմնավորել է, որ 1988-1990 թվականներին Բաքվում հայ ազգաբնակչության դեմ իրականացվել են ջարդեր, որոնք դրսևորվել են նախապես կազմակերպվածության ու իրավապահ մարմինների անգործության

պայմաններում և ուղեկցվել են քաղաքացիական բնակչության դեմ կանոնավոր հարձակումներով, սպանություններով ու լայնածավալ բռնագաղթով:

Աշխատանքի չորրորդ գլուխը՝ «Հայ բնակչության նկատմամբ խորհրդային Ադրբեջանի հանցավոր քաղաքականության ընդհանուր որակման ու պատասխանատվության խնդիրները», բաղկացած է երկու ենթագլուխներից:

Կարելի է ասել, որ չորրորդ գլուխը ատենախոսության թերևս ամենահաջողված մասն է հանդիսանում: Հեղինակը, խնդրո առարկա ուսումնասիրության փաստերը համադրելով մարդկության դեմ ուղղված ցեղասպանական հանցագործությունների հանցակազմերի հետ, ներկայացրել է սեփական տեսակետներն ու մոտեցումները:

Ատենախոսի այն գնահատականը, որ Սումգայիթում, Կիրովաբադում (Գանձակ), Բաքվում հայերի նկատմամբ իրականացված ջարդերը համապատասխանում են ցեղասպանության հանցակազմի տարրերին, միանգամայն փաստարկված են:

Ատենախոսության եզրափակիչ մասում ձևավորված են հիմնական եզրահանգումներն ու ընդհանրացումները:

Հեղինակի հրատարակած ուսումնասիրությունները, ինչպես նաև ատենախոսության սեղմագիրը, արտացոլում են ատենախոսության հիմնական բովանդակությունը:

Ատենախոսությունը զերծ չէ նաև թերություններից.

1. Մեր կարծիքով ատենախոսությունը կարելի էր ներկայացնել երեք գլուխներով: Առաջին գլխի մեջ ներկայացված նյութը, որ կազմում է շուրջ 29 էջ, կարելի էր սեղմ ներկայացնել ներածության մեջ, առավել շատ ծանրանալով բուն հիմնախնդրի վրա: Ըստ էության առաջին գլուխը առանձին գիտական ուսումնասիրության առարկա է:
2. Ատենախոսության մեջ չեն օգտագործվել արխիվային նյութեր: Սումգայիթի, Գանձակի և Բաքվի հայերի ջարդերի վերաբերյալ բավականաչափ փաստաթղթեր են պահպանվում Արցախի պետական պատմաերկրագիտական թանգարանում:

Վերոնշյալ թեմային առնչվող տասնյակ հոդվածներ, հաղորդագրություններ է պահպանվել տվյալ ժամանակաշրջանի «Խորհրդային Ղարաբաղ» թերթի էջերում:

3. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ադրբեջանը Խոջալլուի դեպքերը միջազգային հանրությանը ծուռ հայելու մեջ ներկայացնելով փորձել և փորձում է հայության նկատմամբ իր ցեղասպանական գործողությունները ինչ-որ ձևով մեղմել, հակակշռել, հետևաբար կարելի էր ներածության մեջ կարճ անդրադառնալ նաև այդ հարցին:
4. Ոչ թե 1918թ. հուլիսին է Լեռնային Ղարաբաղը հռչակվել անկախ վարչաքաղաքական տարածք, այլ ավելի վաղ՝ 1917թ. դեկտեմբերի 24-ին, երբ ստեղծվեց Միջկուսակցական բյուրոն: Ասել կուզի մինչև Ադրբեջանի հանրապետության կազմավորումը Արցախն արդեն առանձին վարչաքաղաքական միավոր էր: Ստեղծված հայկական իշխանությանը ընդունում էին նաև տեղացի թաթարները:
5. 1918թ. հուլիսին արցախահայության առաջին համագումարում ստեղծվել է ոչ թե Ազգային ժողով, այլ Ազգային խորհուրդ:
6. Ատենախոսը էջ 26-ում գրել է, որ թուրքական բանակը՝ ադրբեջանական և քրդական զինված ստորաբաժանումների հետ համատեղ 1918-20թթ. միայն Շուշիում սպանեց ավելի քան 8000 հայերի: Հարկ է նշել, որ միայն 1920թ. մարտյան ջարդերի ժամանակ բերդաքաղաքում ավելի քան 10000 մարդ է սպանվել: Հարկ է նշել, որ Շուշիի 1920թ. մարտի 23-ի ջարդերը իրագործվել են Հայոց Մեծ Եղեռնի դահիճների գործելաոճով ու մեթոդներով: Տես՝ Վ. Բալայան, Շուշիի տեղն ու դերը հայոց քաղաքակրթական համակարգում, Երևան, 2017, էջ 441-450:
7. Էջ 27-ում նշվում է, որ Ստալինի ճնշման տակ 1921թ. հուլիսի 5-ին ՌԿ(բ)Կ Կովկասյան Բյուրոյի որոշմամբ Լեռնային Ղարաբաղը մտցվեց Ադրբեջանի կազմ: Ցավոք, մեր պատմագրության մեջ ձևակերպված այս սխալ մոտեցումը տեղ է գտել նաև սույն աշխատության մեջ: Հարկ է նշել, որ այդ որոշումը պայմանավորված էր բոլշևիկյան գաղափարաբանությամբ: Ճիշտ է 2020թ. 44-օրյա պատերազմի ժամանակ մենք շատ մեծ կորուստներ ենք ունեցել, այնուամենայնիվ

չպետք է մոռանալ, որ ԽՍՀՄ-ում խորհրդային վարչակարգի փլուզումը նպաստել էր Արցախի փաստացի ազատագրմանը:

8. Էջ 28 1920-ական թվականներին չի եղել Անդրկովկասյան շրջկոմ: Կուսակցական այդ մարմինը անվանվել է ՀամԿ(բ)Կ Անդրերկրկոմ:
9. 1921թ. Լեռնային Ղարաբաղի հայությունը ոչ թե երկրամասի բնակչության 88,6 տոկոսն էր կազմում (էջ 27 և 38), այլ 94, 73 տոկոսը (122426 մարդ): 5,07 տոկոսը թաթարներ էին (6560 մարդ), և 0,20 տոկոսը հույներ, ռուսներ, քրդեր (267 մարդ): Տես՝ Карапетям М., Этническая структура населения Нагорного Карабаха в 1921 г. (по сельскохозяйственной переписи Азербайджана 1921 г.), Ереван, 1991, с. 10.
10. Էջ 38-ում խոսվում է Հ. Ալիևի հարցազրույցներից մեկի մասին, սակայն հղում չկա:
11. Երբ քննարկվում է հայության նկատմամբ Ադրբեջանի խտրական քաղաքականության մասին պետք է անդրադառնալ նաև սահմանադրությամբ և ԽՍՀՄ օրենքներով ամրագրված ԼՂԻՄ կարգավիճակի, մարզի պետական իշխանության մարմինների իրավասության սահմանափակման, ազգային գործիչների հետապնդման, կարևոր պաշտոնները դրածոներով համալրման հարցերին:
12. Քանի որ ցեղասպանագետ Գրեգորի Ստենտոնի կողմից մշակված տեսությունը հանրահայտ է, ուսումնասիրության մեջ կարելի էր դրան ավելի հակիրճ անդրադառնալ (էջ 40-43):
13. «Բաքվի հայերի նկատմամբ կատարված հանցագործությունների հետևանքները և դրանց դատապարտումը» ենթագլխի տակ (էջ 114-121) ատենախոսը պետք է առավել հանգամանալից անդրադառնար հետևանքներին, հստակ ընդգծելով, որ այդ ամենն անդառնալիորեն սրեց հայ ադրբեջանական հարաբերությունները, և ըստ էության անհնարին դարձրեց արցախա-ադրբեջանական հակամարտությունը խաղաղ ճանապարհով հանգուցալուծելը:

14. 1988-1990 թվականներին Ադրբեջանում հայության նկատմամբ բռնարարքները տարբեր շրջաններում և բնակավայրերում ունեցել են առանձնահատկություններ: Օրինակ Բաքվում հայերի ջարդերին զուգընթաց ժողովրդական ճակատը փորձում էր բռնազավթել նաև իշխանությունը: Կարծում եմ, որ այս հարցերը ատենախոսը նույնպես պետք է քննության նյութ դարձներ:

    Ադրբեջանում հայ բնակչության ցեղասպանությունն ու զանգվածային բռնագաղթը, երկու տարվա ընթացքում, հաջորդաբար բռնկվել է չորս փուլերով: Սումգայիթում տեղի ունեցած ջարդերով սկիզբ դրվեց ադրբեջանահայության ցեղասպանությանն ու բռնագաղթին: Երկրորդ փուլը սկսվեց 1988թ. նոյոմբեր-դեկտեմբերին, երբ ցեղասպանության ալիքը ոլորապտույտի մեջ ներքաշեց Ադրբեջանի գրեթե ողջ հայ բնակչությանը: 1989թ. հուլիս-օգոստոսյան օրերից սկսած սկիզբ առավ երրորդ մեծ բռնագաղաթը: 1990թ. հունվարին Բաքվում ժողովրդական ճակատն Ադրբեջանի իշխանությունների հետ մեկ բռունցք կազմած, ձեռնարկեց մի նոր ցեղասպանություն, որը դարձավ Ադրբեջանից հայերի արտաքսման չորրորդ և վճռական փուլը: Մանրամասն տես՝ Վ. Բալայան, Դրվագներ արցախահայության ազատագրական պայքարի և պետականակերտման պատմության, Ստեփանակերտ, 2012, էջ 288-302:

15. Ադրբեջանում հայ բնակչության նկատմամբ զանգվածային ջարդերի և հանցագործությունների ընդհանուր որակումը փաստարկված և միջազգային հանրությանը առավել ընկալելի դարձնելու համար կարելի էր որոշակի զուգահեռներ անցկացնել Հոլոքոստի հետ (գլուխ IV):

16. Կան նաև որոշ տեխնիկական վրիպակներ: Օրինակ 50, 53, 55, 58, 64, 71-րդ էջերում 131, 138, 149, 158, 183, 207-րդ տողատակերը պետք է լինեին ոչ թե նույն տեղում, այլ նախորդ էջի աղբյուրի կամ գրականության համապատասխան տվյալները:

Նշված թերությունները չեն նսեմացնում Նարեկ Շարաֆյանի կատարած գիտական ուսումնասիրության արժանիքները: Քննարկման ներկայացված ատենախոսությունը հետաքրքիր և բազմաբովանդակ ուսումնասիրություն է: Քննության առարկա գիտական աշխատանքը լիովին բավարարում է թեկնածուական

ատենախոսությանը ներկայացվող պահանջներին և հեղինակն արժանի է իր հայցած պատմական գիտությունների թեկածուի գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս
պատմական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր Վահրամ Ռազմիկի Բալայան

27.06.2022 թ.